INTERNATIONAL MONETARY FUND

COMMUNICATIONS DEPARTMENT

Press Release No. 14/453
FOR IMMEDIATE RELEASE

International Monetary Fund
Washington, D.C. 20431 USA

# ԱՄՀ-ի աշխատակազմը «Երկարաձգվող ֆինանսավորման ծրագրի» առաջին ստուգման շուրջ աշխատակազմի մակարդակով ձեռք է բերում նախնական համաձայնություն և եզրափակում է 2014 թ. IV հոդվածի շրջանակում Հայաստան կատարած այցը

1 հոկտեմբերի 2014 թ.

Առաքելության ավարտին մամուլի հաղորդագրությունները ներառում են ԱՄՀ աշխատակազմի թիմերի հայտարարությունները, որոնք փոխանցում են նախնական եզրակացությունները երկիր կատարած այցից հետո: Սույն հայտարարության մեջ արտահայտված կարծիքներն ԱՄՀ-ի աշխատակազմինն են և պարտադիր չէ, որ ներկայացնեն ԱՄՀ Գործադիր խորհրդի տեսակետները: Սույն առաքելության նախնական եզրակացությունների հիման վրա աշխատակազմը կկազմի զեկույց, որը, ղեկավարության կողմից հաստատվելու դեպքում, կներկայացվի ԱՄՀ-ի Գործադիր խորհրդին՝ քննարկման ու որոշման կայացման համար:

ԱՄՀ առաքելությունը, Մարկ Հորթոնի ղեկավարությամբ, սեպտեմբերի 17-30-ն այցելել է Երևան՝ «Երկարաձգվող ֆինանսավորման ծրագրի» (EFF) շրջանակում առաջին ստուգման քննարկումները և 2014 թ. IV հոդվածի շուրջ խորհրդակցություններն անցկացնելու նպատակով: Վերադառնալով ԱՄՀ-ի կենտրոնական՝ պրն. Հորթոնն այսօր արել է հետևյալ հայտարարությունը.

«2014 թ. Հայաստանի տնտեսության կատարողականը դանդաղել է՝ Ռուսաստանի տնտեսության անկման և Եվրոպայում դանդաղ աճի համատեքստում: Արտահանումը, դրամական փոխանցումները և ներքին պահանջարկն ավելի թույլ են և ակնկալվում է տնտեսական աճի տեմպի դանդաղում, որը 2013 թ. 3.5 տոկոսի դիմաց այս տարի կկազմի 2.6 տոկոս: Արտաքին ընթացիկ հաշվի պակասուրդը որոշ չափով կընդլայնվի, իսկ գնաճը կպահպանվի ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) նպատակադրած միջակայքից (4 ± 1.5 տոկոս) ցածր մակարդակում: 2015 թ. քաղաքականությունների նպատակն է օժանդակել մինչև 3.3 տոկոս տնտեսական աճի ավելացմանը, սակայն առկա են նվազման ուղղությամբ ռիսկեր՝ կապված Ռուսաստանում և Եվրոպայում տնտեսական աճի տեմպի հետագա անկման հետ: Միջնաժամկետ հատվածում կառուցվածքային բարեփոխումների վճռական իրականացումը և տարածաշրջանային հեռանկարների բարելավումը կստարեն ավելի բարձր աճը:

«Հիմնադրամի օժանդակությամբ իրականացվող ծրագիրը հիմնականում ընթանում է իր հունով: Հարկաբյուջետային հաշվեկշռի հունիսի թիրախը ապահովվել է էական գերազանցումով՝ արտացոլելով կապիտալ ծրագրերի թերակատարումը: ՀՀ ԿԲ-ն ապահովել է արտարժութային պահուստների հունիսի թիրախը: Կառուցվածքային բարեփոխումներն ընթանում են, թեև ընդհանուր առաջընթացը միանշանակ չէ: Առաջընթաց կա ֆինանսական հատվածի բարեփոխումների, քաղաքացիական ավիացիայի «բաց երկնքի» շրջանակի ընդունման ուղղությամբ, որի շնորհիվ ավելացել է ավելի ցածր գնով թռիչքների թիվը, և սնանկության գործընթացների վերափոխման

ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներում: Մրցակցության և կարգավորման բարեփոխումների ուշացումներն արտացոլում են մայիսին կառավարության փոփոխությունը:

«Առաքելությունը նախնական համաձայնության է եկել 2014 թ. մնացած ժամանակահատվածի և 2015 թ. քաղաքականության շրջանակի շուրջ, որը կարող է հիմք ստեղծել առաջին ստուգումն ավարտելու համար: Այն ներառում է 2015 թ. բյուջեի պակասուրդի չափավոր ընդլայնումը՝ պահանջարկը խթանելու համար: Հարկաբյուջետային միջոցառումները կընդգրկեն նաև կապիտալ ծախսերի կատարման ամրապնդմանը, հարկային վարչարարության բարելավմանը և հարկաբյուջետային ռիսկերի մեղմմանն ուղղված ջանքեր: ՀՀ ԿԲ-ն կշարունակի հավատարիմ մնալ ճկուն փոխարժեքի և գնաճի նպատակադրման ծրագրին: Մյուս բարեփոխումների նպատակն է կատարելագործել ֆինանսական հատվածը, գործարար միջավայրը և մրցակցությունը, իրագործել կենսաթոշակային նոր օրենքը և ապահովել էներգետիկայի ոլորտի կայունությունն ու արդյունավետության բարձրացումը:

«Ըստ նախնական ժամանակացույցի՝ ԱՄՀ-ի խորհուրդը մինչև տարեվերջ կքննարկի ստուգումը: Հաստատումից հետո ԱՄՀ-ն կտրամադրի 11.74 միլիոն ՓՀԻ (փոխառության հատուկ իրավունք), որի արդյունքում EFF-ի շրջանակում տրամադրված ընդհանուր գումարը կկազմի 23.48 միլիոն ՓՀԻ:

«Պատվիրակությունը հանդիպել է վարչապետ Հովիկ Աբրահամյանին, ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանին, կենտրոնական բանկի նախագահ Արթուր Զավադյանին, էկոնոմիկայի նախարար Կարեն Ճշմարիտյանին, էներգետիկայի և բնական պաշարների նախարար Երվանդ Զախարյանին, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանին, գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանին, ինչպես նաև բարձրաստիճան պետական պաշտոնյաներին, միջազգային համայնքի, գործարար ոլորտների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին: Պատվիրակությունը շնորհակալություն է հայտնում Հայաստանի իշխանություններին և հանդիպումների մյուս մասնակիցներին՝ համագործակցության և հյուրընկալության համար»:


**ԱՄՀ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

**Հասարակայնության հետ կապեր**

Էլ.փոստ՝ publicaffairs@imf.org

Ֆաքս՝ 202-623-6220

**Լրատվամիջոցների հետ կապեր**

Էլ.փոստ՝ media@imf.org

Հեռ.՝ 202-623-7100